

# Ա. Զ Ա Տ Ք Ա Յ Լ



ԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ

Բ. ԳԻՐՔ



ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ  
Հպարան Յ. Սանոյեանցի  
1915

24 MAY 2009


Apr.  
2-468-2a

8(082)  
4h-22

ՊՊԿ

12 OCT 2009

# ԱՂԱՏ ՔԱՅԼ



8/7

ԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Բ. ԳԻՐԵ



ԱԼՔԲՍԱՆԴՐԱՊՈԼ  
Տպարան Յ. Սանոյեանցի  
1915

17 DEC 2013

647

Ա Մ Ա Ռ

Քո աչքերը թոյլ խփում են ծաղկանց պէս,  
Քո շրթները համբուրելու են պատրաստ.

Անյայտ ճամբով սիրու են տանում դէպի քեզ -  
Նայւածքներիդ կանչումները ջերմ, անսասաւ:

Սրտիս համար նոր ծաղիկներ են ցանում  
Քո աչքերի կրակները անչափ մութ,  
Մտորմունքդ է նշոյլներով ծիծագում,  
Որպէս քնքոյց, զես չըբուրած վարդը խուփ:

Քո հեռաւոր բուրմունքները ինձ զրկած  
Երազում եմ, որ քեզ հետ եմ զղեակում,  
Կուղեմ լինել քո համբոյլով համբուրած,  
Ծիծաղներէդ մարմիխիդ ձայնն եմ ես զգում:

Նայւածքներիդ կանաչումներն են ջերմ, անսասաւ  
Պատուհանիս զու անհանգիստ կընայիս,  
Քո շրթները համբուրելու են պատրաստ,  
Քո աչքերը թոյլ խփում են ծաղկանց պէս:

ԴԷՆՂԻ



39832-63

## ԱՄԱԾԻԱՅ ԳԻՇԵՐՆԵՐԻՑ

Ես սիրում եմ այս մութի մէջ սիրել քեզ,  
Դու մութի մէջ չես ամաչում իմ սէրից.  
Դու լինում ես անչափ անզուսպ, տարփակէզ,  
Ոէր է բուրում քո չըհիւսւած ժաղերից:

Յուգումներդ աւելի շատ են բուրում  
Այս մութի մէջ, ուր սիրում եմ սիրել քեզ.  
Միենայն է թէ այն լոյսէ աշխարհում  
Մէկ ենք դառած, թէ հեռու ենք դուն ու ես

Ես սիրում եմ այս մութի մէջ սիրել քեզ,  
Մութի մէջ է, որ չես լինում ամօթիած.  
Չըխօսելով դու ասում ես, որ կուզես  
Լինել սիրոյս համբոյրներով համբուրւած:

Դէնդի

## DOLOR

Даль безграницна!.. Тебя  
больше нѣть, но вспо-  
миная былое, только вспо-  
миная, я жажду тебя!..

Pariam

1

Երեկոյեան տիսուր մթնաշաղը պատեց չըրս  
դին...

Երկինքը տիսրեց և արտասւեց՝ մեսնում էր նրա  
սիրահարը պայծառ, մեսնում էր արեը ոսկէվառ...

Սիրաս էլ էր տիսրում, նո էլ էր արտասւեմ,  
մեսել էր նրա սէրը, սրա հաւաքի հանդանակը...

Բայց երկինքը կըլուսաւրեն շուտով տատկերը  
անհամար, իսկ սրտիս մէջ, ոչ մի տատղ չի փայլի  
այլիս:

11

Ո՞հ, եթէ ես բանամ սիրաս քո առաջ, դու կը  
սարսափես ու կըզարհուրես: Ասա ինձ, արդիօք դու  
տեսել ես արեածագին, արեի լուսով լուսաւորւած  
ամպերը... Ասա ինձ, գու գիտես թէ ինչպէս է ժըպ-  
տում մահամերձ հիւանդը իր վիրջին ժամին...

Տեսել ես թէ ինչպէս է արեը լալիս...

Սրտիս մէջ անծայր ու անսահման թափիծ կայ,  
բայց այդ թափիծի մէջ կայ մի նեղ շաւիդ, մի կաթնա-  
զոյն ուզի, որ տանում է գէպի քո սիրոյ մինաստա-  
նը տիսուր, որ լուս հեծեծում են խօսքիրս մերժ-  
ւած...

## III

Ես աղօթում էի... Ես աղօթում էի քո բախտի,  
քո սիրոյ, քո երջանկութեան համար...

Աղօթում էի Աստծուն, որ վառէ քո բախտի  
ջաները պայծառ, որ լուսաւորէ ուղիները քո սուրբ...  
Որ գու բախտաւոր, կենսութախ ու խաղաղ լինես,  
որ ինձ մոռանաւու...

Որ ոչ մի յիշաղութիւն, ոչ մի կասկած չըվրդո-  
վէ հանգիստը սրտիդ, որ դու ինձ մոռանաս, մոռա-  
նաս ընդմիշտ...

Եւ ես աղօթում էի քեզ համար ..

## IV

Բայց միթէ ես չեմ կարող մոռանալ քեզ...  
Ոչ... Հազար ու հազար անդամ ոչ... Ես պէտք է  
տանջւեմ, ես գիտեմ տանջւել... Մանուկ օրիրից հս  
սովորեցի ծածուկ լաց լինել և ազատ ժպտալ, մա-  
նուկ օրիրից ես սովորեցի ատել ու սիրել և միշտ  
էլ սէրը չի կարողացել ոչնչացնել իմ մէջ եղած ա-  
տելու ցանկութիւնը...

Մանուկ հասակից ես անսովոր մարդ գարձայ:  
Այժմ ես պէտք է տանջւեմ, որովհետեւ գիտեմ տանջ-  
ւել ու շատ եմ տանջւել...

## V

Դու ինձ համար մի փոքրիկ սիրատուն կատու  
ես եղել, կապոյտ աչերով, խորամանկու խաբեբայ...

Ես շատ եմ փայփայիլ քեզ, շատ եմ շոյել ք-  
փոքրիկ մարմինը, շատ եմ սիրել քեզ... Դու էլ շատ  
ես խաղացել սրտիս հետ, սիրտս քեզ հոմար խա-  
ղալիք ես շինել, իմ անգին կապոյտաչեայ կատուս,  
շատ ես վիրաւորել ու արիւնոտել սիրտս, բայց եր-  
բէք չես ուզեցել միանգամից վիրջ տալ նրա տան-  
ջանքներին քո մի կտրուկ հարւածով...

## VI

Արդեօք ովկ է սլացել ամպիրի այն կողմը, ովկ  
է տհուել արեին լուսնի մօտ, ովկ է ուզեցել լաց լի-  
նել արեի սիրուց, բայց չի կարողացել, ովկ է զրկել  
երկինքը կապոյտ...

Այդ բոլորը արել եմ ես... Ես սլացել եմ նրա  
սիրոյ ամպիրի այն կողմը, ես տհուել եմ նրա սրտի  
խաւարը անթափանց, ես տեսել եմ արեին լուսնի  
մօտ, երբ արեկ պայծառ էր, իսկ լուսինը գունատ...

Ուզեցել եմ լաց լինել նրա սիրուց այրւած,  
բայց չեմ կարողացել, որովհետեւնրա ժպիտը արեից էլ  
պայծառ և ուժեղ, քարացրել է արցունքներս աչե-  
րիս մէջ և հիմայ ես քար աչերով եմ նայում աշ-  
խարհին...

Ես զրկել եմ նրա աչերը իմ սիրոյ թերով,  
պայծառ եթերի մէջ, ես զրկել եմ երկինքը կապոյտ ..

Կսում եմ զանգերի զողանջը տխուր ու միաւր, զանգերը լալիս են, զանգերը արտառում են...

ՉՇուտով կըթաղեն մի թախծոտ ու մերժւած սիրտ, կըծածկեն նրան մերժւած սիրոյ մոխիրներով, մերժւած սիրոյ փշտանքները նրան հողակոյտ կըկազմեն, իսկ անգութ աղջկայ վերջին մերժումի խօսքերը ծանր քարի պէս կըճնշեն նրան... կըթաղեն նրան...

—Բայց նա չի մեռնի...

ՄԻՌԵ մեռնում է անհուն եթերում ընկնող առաղը, միՌԵ մեռնում է զողանջը զանգի, անապատի աւաղը, արկը պայծառ...

Ո՞չ...

Չի մեռնի և սէրը, սիրոյ անէծքը, հաւատը սիրոյ, սիրտը մերժւածի...

Շանկազ.

Ժ

\* \*

Ոտքերիդ տակ իմ խօսքերս են արորւած Դալարիբի ծաղիկների նմանալ, Որոնց անփոյթ արորել են չարացած Բիւր զօրքերը արշաւելու ժամանակ:

Ինչ չքնաղ ես գու այս մթնում, այս պահին երբ խօսքերս են սաքելիդ տակ արորւած, Լապտերները մի քիչ յետոյ կըվառւին, Մի ինչ որ տեղ գաշնաժուրն է գաղաղւած:

Իմ սիրոյ զէմ գու կանգնել ես մայթերում, Լապտերները հետզհետէ վառւեցին, Ինչ որ մի տեղ ափսօսում են ու տիրում, Որ մերժւած է մէկը հիմայ, այս պահին

Դէնոի

## ԳԱՐՆԱՆ ԵՐԵԿՈՅ

I

Ծաղիկներն այնպէս դւարթ են այսօր  
Այնպէս պայծառ են տոտղերը բոլոր.  
— Ուզումնեմ այսօր ես քեզ հանդիպել,  
Ուզում եմ քո սուրբ շորերը շոյել...

Կարմիր վարդերի թերթիկներն այնպէս  
Գկւող են այսօր—համբոյրների պէս  
— Ուզում եմ քո սուրբ շորերը շոյել,  
Ուզում եմ կարմիր շրթերդ համբուրել ..

II

Հեղ ծաղկանց պէս զու նստել ես ինձ մօտ,  
Այնպէս զւարթ ու երջանիկ ես այսօր.  
— Լուս ժպտում է սիրտս հիւանդ ու ցաւսա  
Այնպէս զթուտ ու բարի ես զու այսօր...

Մութն է իշխում լայն ու կապոյտ դաշտերում  
Շրթունքները այնպէս նազով են փակւում,  
Հեղ ծաղկանց պէս զու նստել ես ինձ մօտ,  
— Լուս կըհանդին թախծոտ աչքերդ աղօտ...

Սահապետ Ափրիկեան

\* \* \*

Հեռաւոր, մենաւոր մի երկրում  
Մենք իրար փողոցում պատահանք,  
Ես մենակ, դու լոիկ ու տրտում  
—Նայեցինք, ժպտացինք ու անցանք...

Ու մի օր մենք կրկին հանգիպանք  
Եւ իրար չտեսանք, չնայինք,  
Յիշեցինք հին ցաւերն ու պատրանք,  
—Յիշեցինք, տիրեցինք ու լացինք...

Բայց անցան ժամանակ, տարիներ  
Ու նորից մենք իրար պատահանք,  
Բացւեցին նորից հին ստուերներ  
—Նայեցինք, յիշեցինք, մոռացանք...

Շահկազ

## ՄԻ ՕԶԵՂԵՆ ԿԻՆ ԿԱՐՄԻՐ ԱՉՔԵՐՈՎ

(Եպիք յուշատերից)

Ո՞վ է տիսել արեի տակ կարմիր ծովը այբւելիս: Ո՞ւմ աչքերն են կուբացել օձեղէն կնոջ արե հայեացրից, մւմ սիրան է այբւել նրա այբող բոցերից:

Ես գնում էի հրավառ ժայսերի միջով, բարձրանում էի մերկ լեռների գագաթներին ու նորից գնում էի ժայսերի միջով ու մութ-մթութեան մէջ զիշերային մթութեան մէջ: ևս լսում էի վայրի կատուների ճիչեր, գագանների և վազրերի խուլ ոռնոցներ...

Երկինքը ամպամած էր ու ահարկու: Ես քայլում էի օձերի ու կարիճների միջով, անցնում էի խոր անզունդների վրայով ու հանգստանում էի արեակեզ, լայն որջերի մօտ:

Եւ իմ առջեից սողում էին օձեր ու իժեր,

հրգում էին հազարաւոր վայրի գաղաններ ու պարում էին բազմազան կտակիներ...

Ես դոգում էի սոսկումից ու առաջ էի ընթանում տիտուր ու տարտամ...

Բայց յանկարծ լուսաւորւեց երկինքը և հսանծայր հեռուներից լսեցի մի անոնչ այգերգ ու նայեցի գէպի հեռուները լուսեղէն, հեռուները—որտեղից լսում էր այն հրեշտակային երգը և Աստւած իմ... Ես ահսայ լուսափայլ ու հրեղէն մի կը-նոջ, —յակինթէ կարմիր աչքերով.. Հազար շոգք ու հազար ձեւ ունէին նրա աչքերը այրող ու կարմիր, կարմիր—ինչպէս արևահար ու բոցափառ աւազը անապտափ, ինչպէս փայլակների կրակները բոցածի, ու այրող—ինչպէս արեկը սոկեղէն ու հզօր:

Նա մերկ էր... նրա ոսկէ մարմնի վերայ, վառում էին գեղեցկութեան հազարաւոր հրապուրանքներ:

Արեի պէս ոսկէփառ մազերը ծփծփում էին նրա օձեղէն մէջքի վրայ...

Բազմազոյն օձերը ու իժերը իրենց թիւնաւոր շրթունքներով, կարօտափառ համբուրում էին նրա կարմիր շրթունքները պայծառ, մարմինը հրափառ ու նորաբողոջ կուրծքը բոցափառ, կարօտափառ համբուրում էին նրան և այրում, մոխրանում էին...

Վագրերը անծայր հեռուներից նայում էին օձեղէն կնոջ սոկէ մարմին ու հիսնում էին, նրա գե-

ղեցկութեան հազարաւոր հրապուրանքներով...

Նա կրակից, հզօր արեից էր ծնւած:

Արևառ ժայռերը, բազմազոյն օձերը և իժերը, վայրի վագրերը և խոր անդունդները այրում էին կարմիր ծով գարծած, այրում էին նրա հրափառ ու բոցափառ ոտների տակ:

Նա այրում էր օձերին ու իժերին, նա օձեղէն էր ու թիւնաւոր, թիւնաւոր—որովհետեւ սիրում էր, բայց այրում...

Նա ինձ էր նայում ու մի անոնչ երգ էր երգում, կարօտի և երազների երգերից էր երգում ու ինձ սիրոյ անսուրջների զիրկն էր հրապուրում:

Իմ սիրուը սիրում էր մօտենալ նրան, սիրում էր մօտենալ ու համբուրել նրա աչքերը կարմիր, կարմիր—ինչպէս արևահար, վառ աւազը անապատի, ինչպէս արեկի վերջալոյսը կարմիր, իմ սիրուը սիրում էր համբուրել նրա աչքերը այրող, այրող—ինչպէս արեկը սոկէփառ ու հզօր...

Ցես մօտեցայ նրան, համբուրեցի նրա աչքերը կարմիր, բայց աւազ, իմ աչքերը այրուցին, կուրացան ու մոխրի գարծան...

Ես եմ տեսել արեի տակ կարմիր ծովը այրեելիս, իմ աչքերն են կուրացել նրա արե հայեացեցից ու իմ սիրոն է այրւել նրա այրող բոցերից:

Ու այժմ կուրացած ու այրուած, մութ-մթնում

մոլորւած առաջ եմ ընթանում և իմ սրտի կարմիր  
արևն եմ փնդրում, այն օձեղէն կնոշ կարմիր, կար-  
միր տչքերն եմ փնդրում...

Բառեզօ



### Ա Ն Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Հ Ո Ւ Ն

Ես քեզ չեմ տեսել լալով, տիրելով,  
Ես քեզ չեմ տեսել արցունք թափելով,  
—Ես քեզ տեսել եմ պայծառ ու անդարդ  
Ես քեզ տեսել եմ ուրախ ու գւարթ...  
—Իմ այս խեղճ կեանքում ես շատ եմ տեսել  
Բախտաւորներին քեզ հետ խօսելիս,  
Շատ եմ ցանկացել բախտաւոր լինել,  
Բայց միշտ տիրել եմ հս քեզ տեսնելիս...  
Ես քեզ չեմ տեսել լալով, տիրելով,  
Ես քեզ չեմ տեսել արցունք թափելով,  
—Ես քեզ տեսել եմ պայծառ ու անդարդ  
Ես քեզ տեսել եմ ուրախ ու գւարթ...

Անցորդ

39832-67

### Ա Զ Ե Ր

Բարձր... Բարձր...

—Ես կանգնած էի բարձր սարերից մէկի գա-  
գաթին, կապոյտ երկնքի տակ: Ես նայում էի գէպի  
երկնային հեռուները կապոյտ:  
Ցանկարծ... հս տեսայ...


—Ինչու անթափանց խաւարը չըպատեց չորս  
կողմս, ինչու աշխարհը չըպամաչեց երկնքից: Ինչու  
աստղերը չըլացին ցաւից...

Երկինքը քար է կապոյտ, արցունքը ջուր:  
Այնտեղ, այնտեղ էր նա... Ես տեսայ երկն-  
քում նրա տչքերը պայծառու...

II

Գիշեր էր...

Ես անտառումն էի...՝ Զորս կողմս կանաչ էր  
ու ծաղկի, չորս կողմս մութն էր ու խոնաց:  
Գիշեր էր անթափանց... Գունատ էր անտառը...



Աստղերը տիսուր վայլում էին կանաչ թփերի  
միջից: Ես նայեցի նրանց և սառեցի....

—Ծառերի ծաղկող ու բուրող ծաղիկների մէջ,  
որոնց շրյում ու համբուրում էր խելակորոյս զիշե-  
րային քամին, ևս տեսայ նրա աչերը պայծառ, նրա  
աչերը պայծառ...

## III

Ես երկնքումն էի:

Ես նրա յետեից էի եկել, ևս ծարաւում էի  
նրա սուրբ տեսութեանը, նրա թիւնաւոր, կենսատու  
խօսքերին, նրա երկնային նոգու տեսութեանն էի  
ծարաւում...

Նայում էի ևս մեր աշխարհի վերայ:

—Միթէ աշխարհը այսքան գեղեցիկ է եղել...

Յանկարձ... յանկարձ ցածրում ես տեսայ նրա  
կրտկէ—կապոյտ աչերը պայծառ, նրա աչերը, ա-  
չերը...

## IV

Յանտեղ, այնտեղ...

Ես քո յետեից եմ գալիս... Ուր էլ որ գնաս,  
կըգամ, կըգամ...

—Դէպի մթութիւնը քո պայծառ, լոյսերը քո  
սուրբ, երկինքը քո շղթայւած:

—Կանգնիր...

Զէ որ գիշերը լոյս է, արել՝ մութ,

Դու՝ բոլոր չար կըրերի Աստւածն ևս միակ,

Դու՝ ընկած աստղերի համար մի նոր երկինք:

Դու՝ անառագաստ ու անկայան մի նաւ ևս  
ազատ...

Դու՝ մի ահարկու, փոթորկալից կոիւ, աստղե-  
րին տիրանալու ցանկութեան կոիւ...

—Կանգնիր...

Դու՝ սիրոյ ամբոց—մի լայն ու կատաղի ջըր-  
վէժ, ժայռերի ու բարափների մէջ:

Կըհասնեմ, կըգտնեմ...

Դու ինձանից—ես դէպի քեզ...

Այնտեղ, ուր գու, դու՝ Օձ—Աստւած...

Դու ինձանից—ես դէպի քեզ...

Կըհասնեմ, կըհասնեմ...

Խ. Ամիր.

Երեան

## ԿԱՐՕՏ

Ես Մարդ եմ...

Թրթուռն ցնորքների լազուր թևերով, հանդաբար ու գգոյշ սլանում է դէպի եթերային տարածութիւններն անծայր—մարդկային հոգին, իսկ այնտեղ, հեռու, շատ հեռու, մարդկային խիղախ ցնորքներից էլ բարձր թռչում եմ ես...

Թռչում եմ անգոյն եթերի միջից, կայծակների կատաղի որոտներից էլ անեղ, արեի հզօր կրակներից էլ պայծառ, մարդկային այրիչ մտքից էլ արագ, թռչում եմ ես...

—Ես հողեղէն եմ...

Ես եղել եմ ցնորքների օղեղէն աշխարհներում, ուր ապրում են Հակաները հրկնային, միկրոբները խելացի և ուժեղ...

Ես տեսել եմ վառւող աշխարհների կոփւը վերջինն...

Աշխարհի լայն կրծքից գուրս եկած անքոցները, նրա կատաղի հառաջանքներն եմ լսել:

Սիրտս դադարիլ էր խփելուց .. երկնային գեղեցկութեան առաջ լոել էր սիրտս...

Այնտեղ տեսայ ես անմարմին, հրեշտականման կանանց, երկնային կանանց, որոնց աստւածային գեղեցկութիւնից, հրկինքը գոզում էր ու յուզեւում...

Նա թանձր մշուշի քօղով ծածկեց իմ աչերից ամեն ինչ.. Անցնում էին տարիներ, անցնում էին դարեր, բայց ես անմահս, թռչում էի գէպի վերջը անհունի—իսկ վերջ չկար...

Ես անմահ եմ, ես հողեղէնս. . Ես կարօտեցի իմ աշխարհին, ուզեցի լնել այնտեղ ուր ապրում է Հիւր—մարզը հողեղէն...

Տեսնում եմ ահա, երկու անմեղ երեխաներ հեռուն նայելով զնում են ուրախ, բաղցը ժղիալ դէմքերին, բարչ տալով իրենց յիտեից մի փոքրիկ լուցկու արկղիկ...

—Ա՛խ, եթէ ես կարողանայի այնտեղից թըռչել դէպի աշխարհը խարխուլ, մօտենալ անծանօթեղբօրս, հարցնել.

— «Ինչպէս ես ապրում, եղբայր իմ՝ և ըստանալ պատասխան. «Փառք Ամենակորող Սրարչին» ...

—Քնելուց առաջ չոքած տղօթել Առտծուն, անկեղծ ու մաքուր որտով համրուրել կամացուկ ու քնքոյշ բարձերը փափուկ և լաց լինել ու հեկեկալ անվերջ, հեկեկալ այնպէս, ինչպէս ծղբառում է ծղբրիտը անբախտ:

— Հոգով ոլանալ հեռու... հեռու... Դէպի երկնք,  
նրազել կապոյտ երկնքի մասին և յուսալ որ  
վաղը կըտեսնեմ նրան լալով, կըտեսնեմ նրա ար-  
ցունքները անապակ.

Բայց այնտեղ, հեռու շատ հեռու, թռչում եմ  
ես, թռչում եմ անգոյն եթերի միջից, կայծակնեղի  
կատաղի որոտներից էլ ահեղ, արեի հզօր կըտեսնե-  
րից էլ պայծառ, մարդկային այրիչ մտքից էլ ա-  
րագ, թռչում եմ ես...

— Ես հողեղէն եմ...

— Ա՛խ, եթէ այս բոլորը լինէր մի երազ, մի  
բոպէտական ցնորսաբոյր երազ...

Pariam

Բասեն

## ԼՈՒՍԱԶԱՐԴ ԾԱՂԻԿՆԵՐ

Բանաստեղծը, իր հրավառ պարտիզում նստած  
նայում էր նորաբողբոջ աղջիկներին ու համբու-  
րում էր ցնորաբոյր ծաղիկների թերթիկները լու-  
սալարդ:

Աստղաչեայ աղջիկները իրենց սուրբ թերով  
գրկում էին նրան, սեղմում էին ձիւնափառ կրծքե-  
րին և կարօտավառ համբուրում էին նրա շրթունք-  
ները գունատ:

Յանկարծ տիսրեց բանաստեղծը, նայեց լուսա-  
զարդ ծաղիկներին ու գունատւեց: Սկանում էին  
ծաղիկները լուսազարդ ու տիսրեր թափւում էին  
նրանց թերթիկները պայծառ...

— Հիւանդ է մէկը — խորհում էր նա իր սրտի  
խորքում ու արտասւում էր լուռ:

Հեռաւոր մի երկրում մի աղջիկ էր թախծում,  
մեծաւոր մի սիրտ էր մոխրանում, մի սիրտ, որ  
սիրում էր բանաստեղծի աչքերը մութ...

Ան. Ուրիան

Թիֆլիս

## ՕՄԱՐ-ԽԱՅԵԱՄ-Ից:

ՔԱՌԵԱԿՆԵՐ

Գինի խմէ, վաղ թէ ուշ հող պիտի դառնաս.  
Միրածիդ, բարեկամիդ, ամենքին պիտի մոռանաս.  
Բո սրառմ ծածուկ պահիր այս գաղտնիքը,  
Բացւելու չէ նորէն չորացած ու թօշնած ծաղիկը.

Բախտաւոր սիրահարները փայլ չունեն  
Մարած կրակի պէս անգոյն ու սառն են,  
Միայն նա է սիրահար, որ օր ու գիշեր  
Անբռն ու գունատ կըթափառէ ու չունի կեր:

Մաստիկ կարօտով կուժս առայ ձեռս  
Հրեշտակս զւարթ կըխօսէր հետս,  
Կարմիր շրթները ինձ մօտեցուց ու շնչաց,  
—Գինի խմէ Խայեամ, զի հող պիտի դառնաս:

Թարգմ. պարսկերէնից Ի. Գր.

ՀՀ Ազգային գրադարան



NL0168011

Խմբագրեց՝ Ա.ՀՐԻՄԱՆ



ԽՍՀԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀՀ Բիблиոթեկա  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

30701

ԱՅԻ  
ՏՐՈ



## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Ընդունում են նիւթեր։ Նիւթերը ուղարկեալ հասցէով։

Александровль, Пушкинская ул. Плещея О. Казаряна.

Въ редакцію „ԱՅԱՏԻ ԿԱԼՊԻ“

Ա. և Բ. գրքերը կարելի է ստանալ նոյն հայ